| | | |
|---|---|---|
| Ի գին 82 թերթ ժեշտի վասն զանգակատան 3½ փ. թոկի և մի փութ խուղի . . . . . . . | 94 | 62 |
| Ի վարձ ներկելոյ զանգակատան, դրանց, պատուհանաց, որմոց, սեղանոյ եւայլն . . . . . . | 51 | 60 |
| Մնացորդ վարձ ծեփելոյ և սպիտակացուցանելոյ, ի գին վառելափայտի վասն գաջ այրելոյ ու չրեշի . . . | 56 | 50 |
| Ի գին վեց փութ և 30 փ. խուղի վասն ներկի . . . | 54 | |
| Ի վարձ մշակաց վասն զանազան կարեւորութեանց . . | 13 | 36 |
| Ընդ ամէն գումար ծախուց է | 1263 | 55 |

Հոգաբարձուք Պօղոս Ներսէսեան
Յովհաննէս Խալաֆեան
Դաւիթ Գէորգեան
Խաչատուր Եղիազարեան

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

### Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՅՍ.

Արարատ ամսագրոյս ԺԵ. շրջանը ահա սկսուում է ներկայ 1882 ամի Յունվարից.

Ուստի խնդրում ենք մեր Գործակալներէն, որ փութան ծանուցանել Տպ. Ժողովոյն «Արարատ»ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անուանքը ճիշդ հասցէներով.

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի ազգայինք, ինչպէս մինչև ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս և իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կփութան յառաջակայում և միշտ մի և նոյն զօրացմամբք բաժանորդագրուիլ և օգնել սմին.

«Արարատի» թերթից քանակութիւնը, ուղղութիւնը, բովանդակութեանց ծրագիրը և տարեկան բաժանորդագինը մի և նոյն կմնան.

Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովն առաքելով տպել անդորրագրեր «Արարատայ» գործակալներին՝ խնդրէ պահանջել բաժանորդներից ապառիկ և ներկայ բաժանորդագներ և տալ անդորրագիր ի միամտութիւն, դրամներն հանդերձ յայտարարութեամբ առաքել ի Սինոդն. խնդրէ նաև բաժանորդներից ևս, որ պահանջեն գործակալներից տպել անդորրագրեր թէ ապառիկ և թէ ներկայ բաժանորդագնոց վճարման համար.